ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

Թեմա՝

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14-ՐԴ ԴԱՐԻ 1-ԻՆ ԿԵՍԻՆ

Առարկա՝ Պատմություն

Ուսուցիչ՝ Խաչատրյան Հովհաննես

Ղեկավար՝ Հայրապետյան Արմեն

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..……..3

ԳԼՈՒԽ 1.

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1305-1323Թ. ……..6

ԳԼՈՒԽ 2.

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1323-1345ԹԹ....……...……....18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..……27

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրման թեման՝ Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 14-րդ դարի 1-ին կեսին:

Արդիականությունը: Ազգը, որը չունի պատմություն չի կարելի համարել ազգ: Հայոց աշխարհը հարուստ է բնորոշ պատմական տվյալներով՝ որոնցից ցանկացածի ուսումնասիրությունը նորովի է բացահայտում հայկականը և հայ ժողովրդի վարքն ու բարքը տվյալ ժամանակաշրջանում:

Այսպես հայ և եգիպտական ժողովուրդների պատմական սերտ առնչություններն են ստացել քաղաքական, առևտրային, մշակութային և մի շարք այլ ասպարեզներում: Ներկայումս ևս այդ առնչությունն վերացած չէ, ընդհակառակն հայ-եգիպտական հարաբերությունները կարելի է դասել բարեկամական հարաբերությունների շարքին, հաշվի առնելով մեր երկրում հանգրվանած բազմաթիվ եգիպտացիներին, ինչպես նաև մեր երկրից քաղաքացիների պարբերաբար եգիպտոս այցելություններով:

Նշեմ, որ Եգիպտոսում հայերի մասին առաջին հիշատակությունները վերաբերում են մ. թ. ա. IV դարից՝ կապված Արտավազդ Բ-ի՝ Եգիպտոսի թագուհու Կլեոպատրիայի և Անտոնիոս պատանդ հանձնվելուն:

Թերթելով պատմության էջերը կտեսնենք, որ օրինակ VII դարի կեսերին Եգիպտոսում հայերի թիվը բավականին ավելացել է: Բնակվելով Եգիպտոսում հայերը իրենց մասնակցությունն ու ներդրումն են ունեցել վերջինիս մշակութային կյանքում: Սակայն պարբերական բնույթ ունեցող պատերազմները խոչընդոտում են այդ զարգացմանը:

Հայերը իրենց բարենպաստ աշխարհագրական դիրքով մշտապես գրավել են հարևան, և ոչ միայն, ազգերի ուշադրությունները, ինչով էլ պայմանավորված էին պարբերական հարձակումները:

Այսպես, թեմայի շրջանակներում ուսումնասիրել եմ հայ-եգիպտական հարաբերությունների պատմության մի փոքր ժամանակաշրջանը՝ 1303-1343թթ. ընկած հատվածը:

Ուսումնասիրելով, տեսնում ենք, որ այս շրջանում հայ-եգիպտական հարաբերությունները բավականին լարված էին, քանի որ նրանք ևս ցանկանում էին գրավել հայկական հողերը:

Ստորև ավելի մանրամասն կներկայացնեմ նշված կեսդարյա պատմությունը:

Նպատակը: Աշխատանքիս նպատակն է հայկական և արտասահմանյան առկա աղբյուրների համադրմամբ պարզել հայ-եգիպտական հարաբերությունների նշված ժամանակաշրջանը, մասնավորապես.

- Վեր հանել հայ-եգիպտական հարաբերությունների պատկերը տասնչորսերորդ դարում:
- Ժամանակագրական պարբերացման ենթարկել Կիլիկյան հայկական պետության և Եգիպտական սուլթանության փոխհարաբերությունները:
- Բացահայտել Լևոն V-րդ թագավորի վարքի և եգիպտական սուկլթանության հետ ունեցած հարաբերությունները:
- Բացահայտել մամլուքյան արշավանքների հետևանքները հայ-եգիպտական հարաբերությունների վրա:
- Վեր հանել կրոնական հողի վրա իրականացված փոփոխությունների արդյունքները և հասարակության միտվածությունը:
- XIV դարի սկզբներին հայ-եգիպտական, հայ-մոնղոլական և Կիլիկիա-Արևմուտք հարաբերությունների դերը Կիլիկիայի տնտեսությունում:
- հայ-եգիպտական պայմանագրի առավելությունները և թերությունները:
- Այաս նավահանգստի դերը:
- հարևան և արևմուտքի երկրների դիրքորոշումը կապված Կիլիկյան Հայաստանում տիրող իրավիճակի հետ:

Այսպես, որպես նախաբան հավելենք, որ կեսդարյա պատմության և պատերազմների ընթացքում, հայկական կողմը մեկ անգամ է կրել կարճատև հաղթանակ, որը խաթարվել է հերթական հարձակումով:

Վերջնական դադարի արդյունքում կնքվել է պայմանագիր, որն այդքան էլ ձեռնտու չէր հայկական կողմին:

Մեթոդաբանությունը և օգտագործված մեթոդները: Աշխատանքի մեթոդաբանական հիմք է հանդիսացել հայոց պատմության տարատեսակ գրքեր, մասնավորապես

Կիլիկիայի հայկական պետության պատմությանն առնչվող գրքերը՝ Ժամկոչյանի, Աբրահամյանի, Մելիք-Բախշյանի, Պողոսյանի, Հայ ժողովրդի պատմության, Հովհաննիսյանի, Կիլիկիայի Հայկական թագավորության և եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375թթ, գրքերը, ինչպես նաև Միքայելյանի, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Աղայանի, Առաքելյանի, Գալոյանի, Երեմյանի, Խաչիկյանի, Հակոբյանի, Ներսիսյանի, Հայ ժողովրդի պատմության գրքերը:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1.

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1305-1323Թ.

XIV դարի սկզբներին եվրոպայի պետությունների միջև լարված հարաբերությունների հետևանքով գրեթե վերացան խաչակրաց նոր արշավանք կազմակերպելու հույսերը: Իրական օգնություն ցույց տալու փոխարեն՝ եվրոպական երկրների թագավորները և Հռոմի պապը ձգտում էին ավելի ընդարձակել Կիլիկիայում իրենց ազդեցության ոլորտները և նամակներ առաքելով ու ֆինանսական օժանդակություն ցուցաբերելով՝ լուծել իրենց հուզող քաղաքական ու տնտեսական խնդիրները: Իտալական քաղաք-պետությունները, որոնք ամբողջ աշխարհում հայտնի էին իրենց առևտրական գործունեությամբ, Կիլիկիայի թշնամիների դեմ պատերազմում շահագրգռվածություն չէին ցուցաբերում: Նրանք ավելի շատ հակված էին սիրաշահելու Կիլիկիային, կապվելու նրա հետ մի շարք առևտրական պայմանագրերով, որոնցից հսկայական եկամուտներ էին ստանում: Այդ ժամանակ Կիլիկիայի Այաս նավահանգիստը դարձել էր գրեթե միակ անվտանգ նավահանգիստը, որտեղից Արևմտյան Եվրոպայի երկրների վաճառականները առևտրական հարաբերություններ էին պահպանում իրենց արևելյան գործընկերների հետ:

Մոնղոլական էլղանության ներսում արագացել էր տնտեսական կյանքի անկումը, որի հետևանքով, երերուն էր դարձել նաև նրա ռազմական ու քաղաքական վիճակը՝ ավելի խորացավ համընդհանուր ճգնաժամը: Ներքին անկայուն վիճակը, պայքարը հարևան ուլուսների դեմ և Ասիայում բարեկամ խոշոր պետության բացակայությունը ստիպեցին գրեթե բոլոր իշխաններին հզոր դաշնակիցներ փնտրել Եվրոպայում: XIV դարի սկզբին մոնղոլները շարունակում էին նամակագրական կապերի և դեսպանությունների միջոցով եվրոպական երկրներին իրենց կողմը գրավելու քաղաքականությունը:

Դրան հակառակ՝ իրենց ուժերի ծաղկման շրջանում էին գտնվում Կիլիկիայի գլխավոր հակառակորդները՝ Եգիպտոսի մամլուքները:

Եգիպտական սուլթանությունը նվաճեց լատինական իշխանությունները և սահմանակից դարձավ Կիլիկիայի հայկական թագավորությանը[1]:

Եգիպտոսցները, խաչկրաց իշխանությունները նվաճելուց հետո, սահմանակից դարձան Կիլիկյան Հայաստանին: Մամլուքների վտանգն ավելի սպառնալից դարձավ: Միաժամակ Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքական դրությունը վատթարացավ Իկոնիայի սուլթանության վերջնական փլուզման հետևանքով: Սուլթանության տարածքում առաջացան շուրջ մեկ տասնյակ ամիրություններ, որոնցից հարևանների համար առավել վտանգավոր էր թուրքմեն-կարամանների ստեղծած ամիրայությունը:

Սիրիական երրորդ արշավանքից հետո, երբ հայոց արքան վերադարձավ հայրենիք, տագնապալից վիճակը շարունակվեց: Մամլուքյան զորամասերը գրեթե ամեն ամից ներխուժում էին երկիր և ասպատակություններ կատարում հարթավայրային շրջաններում:

1305թ. մամլուքյան զորքերը հերթական անգամ արշավեցին Կիլիկիա: Գրիչ Տիրացուի վկայությամբ. «Ի թուականութեանն Հայկազնի ՉԾ և չորրորդի (1305), և հայրապետութեանն տեառն Գրիգորի, ի դառն և ի չար ժամանակի, նեղեալք յազգէն Իսմայելի, որ ի յայսմ ամի եմուտ զաւրք Եգիպտոսի, ի յաշխարհս Կիլիկե վասն գործոց իմոց չարի, բազում տեղիս մատնեաց անողոմ պատուասի…»[2]: Հեթում պատմիչի հաղորդման համաձայն. «Յամսեանն յուլիսի եօթն հազար Սարակինոսք մտեալ էին յերկիր տերութեանն Հայոց ամենայան աւարհարութեամբ մինչև ի Տարսոն քաղաք ծննդեան առաքելոյն Պօղոսի. և յետ բազում չարիս առնելոյ յետս դարձան, բայց թագաւորն Հայոց իւրովքն ընդ առաջ ել դարձելոցն, և յօգնականութէ բարձրելոյն՝ ամենեքին կամ փերբակալ եղեն, և կամ ճարակ սրոյ, բայց յերեքհարիւր զերծելոց: Գործեցաւ այս յաւուր կիւրակէի յութուտասն յուլիսի: Զկնի այսր բեկման ոչ ևս համարձակեցան Սաևակինոսք դարձ առել ի Հայս, իսկ սուլթանն Եգիպտոսի խաղաղութիւն արար դադարմանն զինուց և հաստատեաց ընդ արքային Հայոց»[3]: Հայկական զորքերի փայլուն հաղթանակը հաստատում է նաև Մքրիզին: Ցավոք, հայ-եգիպտական հակամարտության պատմության մեջ սա վերջին լուրջ հաղթանակն էր մամ-

[1] Գ. Հ. Ժամկոչյան, Գ. Ա. Աբրահամյան, Տ. Ս. Մելիք-Բախշյան, Պ. Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, Երևան 1975, էջ 534

[2] Ա. Է. Հովհաննիսյան, Կիլիկիայի Հայկական թագավորության և եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375թթ, Երևան 2008, էջ 139

[3] Նույն տեղում, էջ 140:

լուքյան զորքերի նկատմամբ: Դրանից հետո մամլուքները մոտ 15 տարի այլևս չհամարձակվեցին ներխուժել Կիլիկիա: Նոր ավերիչ արշավանքներից մամլուքների ձեռնպահ մնալը հնարավորություն տվեց Կիլիկիայի հայկական թագավորությանը զբաղվելու երկրի ներքին զարգացման խնդիրներով, բայց երկրի կառավարող վերնախավը չկարողացավ նպատակասլաց կերպով օգտվել տրված դադարից և հաղթահարել տնական ճգնաժամը:

Հեթում II-ը 1301 թ. պաշտոնապես հրաժարվեց գահից և այն հանձնեց իր եղբորորդի Լևոն IV-ին (1301-1307), բայց այդ անչափահաս թագավորի խնամակալության և խորհրդատուի պարտականություններն ու իրավունքները իր վրա վերցրեց, այսինքն՝ շարունակեց կառավարել եկիրը[4]: Կ. Մութաֆյանի դիպուկ դիտարկմամբ, Հեթում արքան բարդ անձնավորություն էր, և անկարող եղավ ընտրություն կատարել գահի և վանքի միջև:

Հայ-մոնղոլական դաշինքի փաստական կազմալուծումից հետո, Կիլիկիայի ավատատիրական վերնախավի մեծամասնությունն անհրաժեշտ համարեց ավելի սերտ կապեր հաստատել Եվրոպայի հետ: 1306թ. գարնանը Լևոն IV-ի դեսպանները հերթական անգամ դիմեցին Հռոմի պապին: Կլեմենտ V-ը օգնություն խոստացավ հայ հոգևորականության կողմից կաթոլիկ եկեղեցու ծիսակատարություններն ու դավանաբանական սկզբունքներն ընդունելու պայմանով: 1307 թ. Սսում և 1309թ. Ադանայում հրավիրված եկեղեցական ժողովները թեև որոշեցին ընդունել պապի առաջարկները, այնուամենայնիվ հայ և կաթոլիկ եկեղեցիների միության՝ Ունիայի գաղափարը հնարավոր չեղավ իրականացնել. Հեթումի և Լևոնի ճնշման ներքո ժողովականները սիպված եղան համաձայնվել դրան: Սակայն այդ որոշումը չկատարվեց, որովհետև հայ բնակրությունը և հոգևորականների զգալի մասը դեմ էին դրան[5]:

Շուտով ավարտին հասավ նաև հայ-մոնղոլական դաշինքի հոգեվարքը: 1307թ. նոյեմբերի 18-ին, մոնղոլական զորահրամանատար Փիլարղուն Անարզաբա քաղաք հրավիրեց Լևոն IV թագավորին, Հեթում թագավորահորը, մի շարք նշանավոր իշխանների և սպանեց նրանց:

---

[4] Գ. Հ. Ժամկոչյան, Գ. Ա. Աբրահամյան, Տ. Ս. Մելիք-Բախշյան, Պ. Ս. Պողոսյան, նշվ. աշխ, Երևան 1975, էջ 535:

[5] Նույն տեղում:

Օշին իշխանը իմանալով եղբայր Հեթումի, եղբորդրոդի Լևոն IV-ի և անվանի իշխանների սպանության մասին՝ կռվի ելավ Փիլարդուի դեմ և նրանց ստիպեց հեռանալ Կիլիկիայից:[6]

Ճիշտ է մոնղոլներն առաջվա նման չէին սպառնում Կիլիկիային, բայց դրա փոխարեն XIV դարում Կիլիկիայի համար ուժեղացավ վտանգը Եգիպտոսի կողմից. սկեցին կողոպտրական հարձակումներ կատարել:[7]

Այսպիսով խզվեցին մոնղոլների հետ բարեկամական հարաբերությունները, որի հետևանքն եղավ այն, որ XIV դարի առաջին քառորդին նոր թափով վերսկսվեցին բանակցությունները եվրոպական երկրների և Հռոմի պապի հետ:

Փիլարդուին Կիլիկիայից հեռանալուց հետո Օշինը օծվեց Կիլիկիայի թագավոր (1308-1320):[8] Կիլիկիայի սահմաններում 1308-1320թթ. հարաբերական անդորր հաստատվեց: Այդ տարիներին Կիլիկյան Հայաստանը ապահովում էր խաղաղությունը Եգիպտոսի սուլթանության հետ՝ ամենամյա տուրք վճարելու պայմանով: Աբուլ Ֆիդայի վկայությամբ, Կիլիկիայի հայերը, ստանձնած պարտավորության համաձայն, որոշակի քանակությամբ ապրանքներ էին հանձնում մամլուքներին:

XIV դարի սկզբներին հայ-եգիպտական, հայ-մոնղոլական և Կիլիկիա-Արևմուտք հարաբերություններում շարունակում էր կարևորվել Կիլիկիայի տնտեսական դերը:

Ինչպես հայտնի է, Արևմուտքի ավատատերերի, Հռոմի պապի, Եվրոպայի թագավորների կողմից խաչակրաց արշավանքներ կազմակերպելու նպատակներից մեկն էլ Երուսաղեմի, Պաղեստինի, Սիրիայի առևտրական ճանապարհներին տիրելն էր: XIV դարի սկզբներից, խաչակրաց շարժման վերջնական ձախողումից հետո, միջազգային նոր իրադրության պայմաններում Կիլիկիայի ռազմավարական, տնտեսական ու քաղաքական նշանակությունն ավելի աճեց: Որքան աճում էր Կիլիկիայի առևտրի ծավալը Արևմուտքի հետ, նույնքան էլ ավելանում էր Եգիպտոսի սուլթանության թշնամանքը հայերի հանդեպ, որովհետև Կիլիկյան Հայաստանը, վերածվելով Արևելքի և Արևմուտքի միջև առևտրական կամրջի, արձել էր Եգիպտոսի մրցակիցը:

---

[6] Գրիգոր Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, էջ 446:
[7] Նույն տեղում:
[8] Աղայան Ծ. Պ., Առաքելյան Բ. Ն., Գալոյան Գ. Ա., Երեմյան Ս. Տ., Խաչիկյան Լ. Ի., Հակոբյան Ա. Մ., Ներսիսյան Մ. Գ, Հայ ժողովրդի պատմություն, էջ 768:

Բացի ծովային ճանապարհներից՝ Կիլիկիայի համար կարևոր նշանակություն ունեին ցամաքային ուղիները: Կիլիկիայից դուրս եկող առևտրական մայրուղիները ձգվում էին Միջերկրական ծովի ափով դեպի Ատալիա, Իկոնիա, Անտիոք, իսկ Կապադովկիայի վրայով՝ դեպի Փոքր Ասիայի սևծովյան նավահանգիստներ, Սինոպ ու Տրապիզոն: Մարինո Սանուտոն եվրոպացիներին խորհուրդ էր տալիս հնդկական ապրանքներ չհնել Ալեքսանդրիայից և գերադասությունը տալ Կիլիկիային:

Հարձակվելով Այասի վրա՝ մամլուքները փորձում էին հօգուտ Ալեքսանդրիայի փակել Այաս-Թավրիզ քավարանային ճանապարհը: Լարվածությունը հակամարտող կողմերի միջև պայմանավորված էր այն հանգամանքով, որ Հնդկաստան-Եվրոպա ապրանքափոխանակության ասպարեզում Այաս-Թավրիզ քարավանային ճանապարհը մրցակցում էր Հնդկաստան-Կարմիր ծով ծովային ճանապարհի, իսկ Այաս նավահանգիստը՝ Ալեքսանդրիայի հետ: Եգիպտացիներին զայրացնում էր նաև այն փաստը, որ Եգիպտոսի համար կարևոր շատ ապրանքներ՝ փայտ, բամբակ, երկաթ և այլն հայոց թագավորի հրամանով չէին վաճառում եգիոտացիներին՝ Հռոմի պապի դրած արգելքի պատճառով: Դրանից օգտվում էին վենետիկցիները ու ջենովացիները, որոնք հակառակ պապի դրած արգելքներին, հայերից գնում էին այդ ապրանքները և վերավաճառում եգիպտացիներին: Այսպիսով, XIV դարի սկզբներին Եգիպտոսի սուլթանության արշավանքները Կիլիկիայի, և հատկապես Այասի դեմ, ավելի մեծ չափով ունեին տնտեսական, քան ռազմական կամ քաղաքական շարժառիթներ: Հետևաբար, սխալ է որոշ հետազոտողների այն կարծիքը, որ XIV դարի առաջին քառորդում մամլուքների արշավանքների հիմնական պատճառը հայերի կողմից կաթոլիկության ընդունման փորձեր կատարելն էր կամ պապին ու եվրոպական երկրների թագավորների դիմումներ հղելը:

Անդրադառնալով հայ-եգիպտական հարաբերությունների ռազմաքաղաքական կողմին՝ պետք է նշել մի կարևոր իրադարձության մասի ևս: 1312թ. Օլջեյթու իշխանը նոր արշավանք ձեռնարկեց Եգիպտոսի սուլթանության դեմ, որը վերջինն էր դեպի Սիրիա կատարած արշավանքների շարքում: Դարձյալ փախողումով ավարտած այս ձեռնարկումը հետաքրքրություն է ներկայացնում այն առումով, որ Կիլիկիան չմասնակցեց այդ արշավանքին: Հետևաբար, կարելի է կարծել, որ հայ-մոնղոլական համագործակցություն իսպառ վերացել էր:

Նման պայմաններում Կիլիկիայի իշխող վերնախավը սկսել էր ավելի մեծ հույսեր կապել Արևմուտքի հետ: 1317թ. Օշինը նոր պատվիրակություն ուղարկեց Եվրոպա՝ օգնություն խնդրելու նպատակով: Ինչպես նախկինում, այս անգամ ևս Կիլիկյան Հայաստանի կոչը մնաց անարձագանք:

Օշին թագավորի մահից հետո 1320թ. գահ բարձրացավ նրա անչափահաս որդին՝ Լևոն V (1320-1340): «Օծեցին թագաւոր Հայոց զդեռաբոյսն զորդի Օշին թագաւորին զԼևոն»: Նրա անչափահասության պատճառով՝ երկիրը ղեկավարում էր խնամակալների խորհուրդը: Խնամակալներն էին Կոռիկոսի իշխան Օշին Պայլը, նրա եղբայր Կոստանդինը, Նղիրի իշխան Հեթումը և վերջինիս եղբայրը՝ Բաղդինը:

Լևոն V-ի թագավորության հենց առաջին տարիներին Եգիպտական սուլթանության խրախուսանքով Կիլիկիայի վրա հարձակվեցին թաթար Թեմուրդաշը և թուրք Ամիր-Օմարը: Նրանք 1321թ. հյուսիսից և արևելքից մտան Կիլիկիա և, ասպատակելով մի շարք գավառներ, հասան մինչև Մամեստիա և Ադանա: Այդ նույն թվականին Կիլիկա ներխուժեցին նաև եգիպտական մեծաքանակ մի բանակ՝ սուլթան Մելիք-Նասիրի գլխավորությամբ, և գրավեց Այաս քաղաքը:

Հայկական բանակը անպատրաստ գտնվեց այդ հարձակումների հանդեպ: Մանկահասակ թագավորը, Օշին պայլը և սրա եղբայրը՝ Կոստանդին Գունդստաբլը իրենց զորքերով քաշվեցին լեռները և ամրացան բերդերում: Երկիրը մնաց անպաշտպան: Միայն տեղ-տեղ կազմակերպվեցին աշխարհազորային և պարտիզանական ջոկատներ, որոնք լեռնանցքներում և կիրճերում փոկում էին թշնամու զորքերի ճանապարհը ու հարվածում նրանց: Այդ ջոկատներից հայտնի է Այասի մոտակայքում 600 մարդուց կազմված խումբը, որը մեծ կորուստ պատճառեց եգիպտական զորքերին: Ակտիվ կերպով գործել է նաև մի այլ՝ 200 հոգուց բաղկացած ջոկատ, որի գործողությունների հետևանքով ոչնչացվել է շուրջ 6000 մամլուկյան զինվոր[9]:

Այսպես, Լևոնի հինգ խնամակալներից առանձնապես շանավոր թր Կոռիկոսի իշխան Օշինը: Վերջինս Լևոն V-ին ամուսնացրեց իր դստեր հետ իսկ ինքը ամուսնացավ մայր թագուհու հետ: Ավելին, նա իր եղբորը՝ Կոստանդինին նշանակեց սպարապետ և այսպիսով սկսեց վարել պետության գործերը[10]:

---

[9] Գ. Հ. Ժամկոչյան, Գ. Ա. Աբրահամյան, Տ. Ս. Մելիք-Բախշյան, Պ. Ս. Պողոսյան,նշվ. աշխ., էջ 537:

[10] Աղայան Ծ. Պ., Առաքելյան Բ. Ն., Գալոյան Գ. Ա., Երեմյան Ս. Տ., Խաչիկյան Լ. Ի., Հակոբյան Ա. Մ., Ներսիսյան Մ. Գ, նշվ. աշխ., էջ 771:

Պատմագիտության մեջ ընդունված է դեպի Կիլիկյան Հայաստան մամլուքների ու նրանց զանազան դաշնակիցների արշավանքների վերահսկումը կապել հայոց թագավորության արտաքին դրության վատթարացման և հատկապես Լևոն V-ի գահ բարձրանալուց հետո արքունիքում ու հայ իշխանների շրջանում ներքին պայքարի ծավալման հետ: Արաբական սկզբնաղբյուրների ուշադիր ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ թշնամիների հարձակումները սկսվել են Օշին արքայի մահվան նախօրյակին և ավելի խորացել թագավորությունում սկսված ճգնաժամային իրավիճակը: Աբուլ Ֆիդայի վկայությամբ, թագավորն արդեն հիվանդ էր, երբ Նասիր սուլթանի հրամանով սիրիական քաղաքներից՝ Դամասկոսից, Համայից, Հալեպից հավաքված գնդերը, Ալթուն Բուղայի հրամանատարությամբ, 1320թ. մայիսի 26-ին ներժուժեցին Կիլիկյան Հայաստան: Ջահան գետը անցնելիս մեծ թվով կորուստներ տալուց հետո, նրանք պաշարեցին Սսի միջնաբերդը, բայց կարողացան գրավել միայն պարսպի մեծ մասը: Թշնամին այնուհետև զբաղվեց սովորական ավարառությամբ և Բաղրասով վերադարձավ Սիրիա: Իբն ալ-Վարդի տեղեկությունները զգալիչափով լրացնում են նախորդի ուրվագծած պատկերը: Եթե Աբուլ Ֆիդան արշավանքի ընդհանուր տևողությունը նշում էր 22 օր, ապա Իբն ալ-Վարդին խոսում է 17 օր շարունակ երկիրը ավերելու ու կողոպտելու մասին: Նա նաև ճշգրիտ հաղորդում է Ջահան գետը անցնելիս խեղդվածների թիվը՝ 1000 զինվոր: Այսպիսով, թե արշավանքի երթուղու և թե տևողության առումով սիրիական զորքերի 1320 թ. մայիս-հունիսյան արշավաքը սովորական երևույթ էր ներկայացնում:

Իբն ալ-Վարդիի հանգամանալից տեղեկությունները աներկբայելիորեն ապացուցում են, որ սիրիական զորքերի արշավանքին անմիջապես հաջորդել է եգիպտական գնդերի ներխուժումը, որն այլ երթուղի է ունեցել ու համեմատաբար ավելի ընդարձակ տարածք է ընդգրկել: Պատմիչը գրում է. «Նույն տարվա Ջումադալ-ուխրա ամսում (1320 հուլիսի 9-օգոստոսի 6) Տրիպոլսի իշխան Կարդայը եգիպտական զորքերի հետ արշավեց հայոց երկիր 20 հազարից ավելի զորքով: Բայց նրանց մի մասը խեղդվեց Ջայհան գետում, նրանց թվում չորս էմիրներ: Բանակները պաշարեցին Սիսը, հրդեհեցին թագավորի պալատը և կտրատեցին ծառերը: Նրանց ավերեցին Մասիիսը, քանդեցին Ադանայի պարիսպները, մեծ վնասներ հասցրեցին նաև Տարսոնին, որտեղ հրդեհեցին ծառերը: Երբ նրանք վերադառնալիս հասել էին

Ջայհան գետըմ այնտեղ մի մարդ լուր տվեց, թե Սսի թագավորը մահացել է»[11]: Հետևաբար, արշավանքն ավարտվել է 1320թ. հուլիսի 19-20-ից հետո, երբ ուժերի ծաղկման շրջանում, 37 տարեկան ծաղկման հասակում մահացավ Օշին թագավորը: Նրա նշանակած խնամակալների խորհուրդը չկարողացավ ապահովել երկրի անվտանգությունը թշնամիների հարձակումներից:

XIV դարի 20-ական թվականների սկզբներին իշխանական արքունիքի ամենաազդեցիկ դեմքի՝ Չոբանի որդի Թիմուրտաշը նշանակվեց Ռումի (մոնղոլական փոքրասիական տիրույթների) կառավարիչ և ձգտում էր անկախ կառավարիչ դառնալ: Իր նպատակներին հասնելու համար նա սկսեց դաշնակցել Եգիպտոսի սուլթանության հետ, որտեղ երրորդ անգամ՝ 1309-1341թթ. գահին տիրացել էր Նասիր սուլթանը: 1321թ. Նասիր սուլթանի մոտ ժամանեց Թիմուրտաշի ուղարկած դեսպանը, և կողմերը, հավանանաբար, պայմանավորվածություն ձեռք բերեցին հետագա համագործակցության վերաբերյալ:

Առաջինը հյուսիսից Կիլիկիայի վրա հարձակվեցին Թիմուրշատի զորքերը: Սամվել Անեցու երկի շարունակողներից մեկի հաղորդմամբ. «Եկն անօրէն նուինն Թամուրտաշն որդի Չօպանին յերկիրն Սըսոյ՝ և զբազում վնաս գործեաց, զբազումս եսպան՝ և զբազումս գերի վարեաց և ել ի Հոռոմս»[12]: Մեկ այլ ժամանակագիր տեղեկացնում է, որ Թիմուրտաշը Կիլիկա է ներխուժել երկիրն տիրանալու նպատակով, սակայն, 3 օր Սսի մոտ անցկացնելուց հետո, անակնկալ հեռացել է: Ըստ Հեթում Ախտուց տիրոջ՝ թշնամու բանակը Կիլիկիա է մտել 1321թ. նոյեմբերի 14-ին՝ շաբաթ օրը: Սա միակ հաղորդումն է հայկական և օտար սկզբնաղբյուրների շարքում, ուր ճշգրիտ թվագրվում է հակառակորդ զորաբանակի ներխուժումը Կիլիկյան Հայաստան: Ներսես Պալիենցի տեղեկացմամբ, Թիմուրտաշը Կիլիկիա մտավ 30 հազար հեծյալով, անչափ հետևակով: Թշնամին մեծ ջանքեր գործադրեց դրավելու համար երկրի բերդերը, բայց հաջողության չհասավ: Երբ նրա զորքերը անցնում էին լեռնային տարածքով, մեծ կորուստներ կրեցին: Ավելին, «երկնչէին Հայերն յայտնի վնասել Թաթարնոյն, ապայ թէ ոչ զամենայն կոտորեալ էին և սպառեալ»: Այսպիսով, հայկական սկզբնաղբյուրները միահամուռ կերպով նշում են Թիմուրտաշի ձեռնարկման ձախողումը, երկիրը գրավելու նրա անկարողությունը: Աբուլ Ֆիդայի պնդմամբ, Լևոն

[11] Հովհաննիսյան Արամ Էդուարդի, նշվ. աշխ., էջ 141:
[12] Նույն տեղում:

թագավորը ապաստան է գտել Այասի ծովային բերդում: Արաբ պատմիչը խուսափում է Կիլիայում Թիմուրտաշի կրած անհաջողությունների մասին խոսելուց: Նա նշում է, որ մոտ մեկ ամիս հետո Թիմուրտաշի զորքերը վերադարձել են: Հետևաբար, մոնղոլական կառավարչի զորքերը թողել են Կիլիկիան մասնավորապես 1321թ. դեկտեմբերին, ձմռանը: Ժամանակագրական այս հաշվարկը հաստատվում է նաև Ներսես Պալիենցի տեղեկություններով, որը Թիմուրտաշի հետանալը Կիլիկիայից դնում է ձմռանը:

1322թ. Լևոն V նամակ գրեց պապին՝ օգնություն ցույց տալու խնդրանքով: Պապը պատասխանեց, որ Եվրոպայի թագավորները պատերազմի մեջ են և չեն կարող Արևելք մեկնել: Եգիպտոսի սուլթանը, իմանալով այդ մասին, որոշեց այս անգամ իր գլխավոր հարվածը ուղղել Այասի դեմ: 1322թ. գարնանը եգիպտացիները վերսկսեցին Կիլիկիայի դեմ ուղղված ռազմական գործողությունները:

Ներսես Պալիենցը հետևյալ կերպ է նկարագրում սուլթան Նասիկի կազմակերպած արշավանքը Այասի վրա «Ի գարունն մերձակայ, արիլ Ի (20) զօրքն սուլտանին ԽՌ (40000) հեծեալս և այլ անչափ հետևակս եկին ի նոյն երկիրն Հայոց. և եկեալ ի քաղաքն էգիոյի, որ է Այասս: Յերկրորդ օրն, յօր տօնի սրբոյն Գէորգայ, ԻԳ (23) ապրիլի, առին զմինային բերդն, զի ծովն ցամաքեցաւ և ի ներս գնաց… և գերեցին անդ՝ անթիւ, անձինք և անբաւ աւար առին»[13]: Ստացվում է, որ Այասի ծովային բերդը գրավվե; է պաշարման երկրորդ օրը, և այդ ռազմական գործողությունը մամլուքներից մեծ ջանքեր չի պահանջել: Փոխարենը, համառ դիմադրություն ցույց է տվել ցամաքային ամրոցը, որը թշնամին գրավել է բաբաններով պարիսպները ավերելուց ու «յամենայն կողմանց» սաստիկ մարտեր մղելուց հետո: Այասի գրավումը նկարագրելիս Աբուլ Ֆիդան խոսում է միայն Այասի «ծովի վրա գտնվող բերդի» մասին, նշելով դրան տիրանալու ճիշտ օրը: Այդ ամրոցը դիմադրություն է ցույց տվել և մամլուքները այն գրավել են հետևյալ կերպ. «մուսուլմաններն հարձակվեցին բազմաթիվ քարանետ մեքենաներով և ծովից նավերով հարձակում գործեցին երկու ուղղությամբ, մինչև որ ավերեցին բերդ և թափանցեցին ներս»: Սմբատ Սպարապետի երկը շարունակողը ևս պատմում է բերդի պարիսպները 12 օր շարունակ բաբաններով ավերելու մասին:

[13] Հովհաննիսյան Արամ Էդուարդի, նշվ. աշխ., էջ 143:

Այսպես, Այասի գրավումտ թվագրելու համար ունենք չորս վկայություն: Կալկաշանդին նշում է, որ Այասը գրավվեց հիջրայի 722 թվականին ռաբի I ամսի չորրորդ օրը՝ 1322թ. մարտի 23-ին և, այդպիսով ակնհայտորեն շուրջ մեկ ամսվա սխալ է թույլ տալիս: Ըստ Իբն ալ-Վարդիի, Այաստ գրավվեց հիջրայի 722 թվականին ռաբիի II ամսում՝ 1322թ. ապրիլի 19-ից մայիսի 17-ը ընկած ժամանակահատվածում: Աբուլ Ֆիդան Այասի «ծովի վրա գտնվող բերդի» գրավումը թվագրում է հիջայի 722 թվականի ռաբի ախար ամսի 21-ով, այսինքն՝ 1322թ. մայիսի 9-ով: Այսպիսով, քննությունը ցույց է տալիս, որ Իբն ալ-Վարդիի և Ներսես Պալիենցի տեղեկությունները լրացնում են միմյանց և իրադարձությունները տեղի են ունեցել այսպիսի հաջորդականությամբ:

Այասի ծովային բերդը 1322թ. ապրիլի 23-ին գրավելուց հետո, մամլուքները ձեռնարկել են ցամաքային ամրոցի 12-օրյա պաշարումը, որը, եթե առաջնորդվելու լինենք հայական սկզբնաղյուրների վկայություններով, ավարտված պետք է լիներ մայիսի սկզբներին: Եվ իրոք, ըստ Աբուլ Ֆիդայի, Այասի «ծովի վրա գտնվող», մեր պատկերացումներով՝ ցամաքային ամրոցը թշնամուն է անցել մայիսի 9-ին: Հետևաբար, ինչպես տեսնում ենք, Իբն ալ-Վարդին լիակատար իրավունք է ունեցել զույգ բերդերի գրավումը նշել արաբական տոմարի միևնույն ամսով: Հիրավի, Ներսես Պալիենցի մատնանշած ապրիլի 23-ը և Աբուլ Ֆիդայի վկայած մայիսի 9-ը տեղավորվում են Իբն ալ-Վարդի ավանդած ժամանակահատվածի մեջ:

Մամլուքների ռազմական գործողությունները չասահմանափակվեցին Այասի գրավումով և ավերումով: Սամվել Անեցու ժամանակագրության շարունակողներից մեկն ավելացնում է, որ եգիպտացիները ավերեցին Այասի ծովային ու ցամաքային բերդերը և Կիլիկիայից մոտ 20 հազար մարդ գերի տարան: Նոր տվյալներ հաղորդում են մնացած սկզբնաղբյուրները: Պարզվում է, որ սուլթանական զորքերը հետևել են հստակ ռազմավարական ծրագրի: Նրանք այս անգամ չեն հրապուրվել կիլիկյան մեծ քաղաքների կողոպուտով և սահմանափակվել են այն տարածքներով, որոնք նախատեսել են հետագայում մտցնել իրենց պետության սահմանների մեջ: Այասում իրենց նպատակը իրականացնելուց հետո, մամլուքները «եկին իջան ի գետեզրն, որ կոչի Ջահան, և հրաման տաուել զօրացն յարձակիլ առ ստորոտ լէրանց աշխարհիս՝ շատք գերեցին: Իսկ զօրք թագաւորին Լևոնի սրտախոց եղեն ընդ աւերումն երկիրս. քիչ մարդով գնացին ի վերայ իջևանի նոցա և արարին խիստ կոտորած»: 1322թ.

կռվների ժամանակ հայերը հաջողություններ ունեցան հիմնականում կիրճերում ու լեռնանցքներում անսպասելի հարձակումներ գործելու շնորհիվ: Մամլուքները հասել էին իրենց հիմնական նպատակին՝ ոչնչացրել էին Այասը որպես առևտրական մրցակից և վերագրավել էին 1298թ. նվաճած տարածքները:

Ի վերջո, Լևոն V թագավորը 1323թ. Կոնստանդին Լամբրոնացի (1323-1326) կաթողիկոսի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկեց Կահիրե՝ սուլթանի հետ հաշտություն կնքելու նպատակով. «Գնաց տէր Կոստանդին կաթողիկոսն առ սուլտանն Մսրայ և արար սէր և խաղաղութիւն և դարձաւ մեծ պատուով»: Հաշտության պայմանագիրը կնքվեց 15 տարի ժամանակով: Պայմանագրով.

Կիլիկյան Հայաստանը պարտավորվում էր Եգիպտոսի սուլթանությանը վճարել տարեկան մեկ միլիոն 200 հազար արծաթ դիրհեմ:

1. Հայերը հանձն էին առնում Եգիպտոսի սուլթանությանը վճարել Այաս նավահանգստից ստացվող եկամուտների 50 տոկոսը:
2. Եգիպտոսի սուլթանությանը պետք է վճարվեր օտարականներին վաճառված աղի եկամուտների կեսը:
3. Հայերը պարտավորվում էին խզել բոլոր կապերը Արևմուտքի հետ:
4. Եգիպտոսի սուլթանությունը պարտավորվում էր զորքերը հետ քաշել Կիլիկիայից:
5. Սուլթանը պարտավորվում էր իր ծախսերով վերաշինել ավերված քաղաքները, բացի Այաս ծովային բերդի ամրություններից:[14]

Ինչ վերաբերում է բերդերին, որոնք սուլթանը պահանջել էր խաղաղության դիմաց՝ Սարվանդիքարը, Թիլ Համդունը, Համուսը, Կվայրան, Նողայրը, Մարաշը, ապա այս տարածքները, ամենայն հավանականությամբ, նույնօրեա հանձնվեցին եգիպտացիներին: Եթե այս բերդերի հարցը չլիներ, ապա 1320թ. արշավանքներից հետո սուլթանը, հավանաբար, կհամաձայնվեր Լևոն V-ի դեսպանների հաշտություն կնքելու առաջարկին: Պետք է նշել, որ հետագա տասնամյակների ընթացքում Կիլիկյան Հայաստանի տարածքի մասին հիշատակություններում այս տեղանուններն այլևս չեն հանդիպում որպես հայոց թագավորությանը պատկանող շրջաններ, որով և հաստատվում է մեր առաջ քաշած վարկածի ճշմարտությունը: Ուրեմն՝ կարելի է

[14] Հովհաննիսյան Արամ Էդուարդի, նշվ. աշխ., էջ 154:

ենթադրել, որ 1323թ. պայմանագրի մեջ եղել է հատուկ կետ, ըստ որի Սարվանդիքարը, Թիլ Համդունը, Համուսը, Կվայրան, Նողայրը, Մարաշը հանձնվել են Եգիպտոսի սուլթանությանը:

XIV դարի 20-ական թվականներին հայկական թագավորության կրած պարտությունները ակնհայտորեն Կիլիկիայում տիրող ռազմաքաղաքական ճգնաժամի հետևանք էին: Կիլիկիայի իշխող վերնախավը չկարողացավ իր շուրջ համախմբել; ոչ միայն հասարակ ժողովրդին, այլև իշխաններին և ազնվականությանը: Ներքին գահակալական կռիվներն, ունիթորների և հակաունիթորների անվերջանալի վեճերը թույլ չտվեցին թշնամու դեմ միավորել երկրի մարդկային և նյութական բոլոր միջոցները: Եգիպտոսի ռազմական ուժերը շատ ավելի մեծաթիվ էին և լավ կազմակերպված: Մոնղոլները և եվրոպալամ երկրները չօգնեցին Կիլիկիային: Ավելին, 1323թ. Աբու Սայիդ իլխանը (1317-1335) հաշտություն կնքեց մամլուքների հետ՝ վերջ տալով Միջերկրական ծովի արևելյան ափի համար Եգիպտոսի սուլթանության դեմ ծավալված պայքարին: Այս ամենի հետևանքը եղավ այն, որ XIV դարի առաջին քառորդի վերջում Կիլիկյան Հայաստանը արդեն կիսով չափ ենթարկվեց Եգիպտոսի մամլուքյան սուլթանությանը: Պատահական չէ, որ մարոկկացի հայտնի ճանապարհորդ Իբն Բատուտան (նա Եգիպտոսից տուն էր վերադառնում Սիրիայի տարածքով և եղել էր նաև Կիլիկիայում) նշում է, թե XIV դարի 20-30-ական թթ. հայոց թագավորությունը ստորակայության կախվածության մեջ էր Եգիպտոսի սուլթանից:

ԳԼՈՒԽ 2.

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1323-1345 ԹԹ.

Այսպիսով, Լևոնը հարկադրված էր 1323 թվականին ծանր պայմանագիր կնքել սուլթանության հետ՝ մեծ գումարներ տալուց բացի նա ստիպված էր սուլթանությանը զիջել երկրի առափնյա մի շարք շրջաններ և հռչակավոր Այաս նավահանգիստը[15], սակայն պայմանագրի կնքումից հետո Կիլիկիայում կարճատև խախաղություն հաստատվեց: Երկրում ստեղծված ժամանակավոր խախաղությունը նպաստեց տնտեսության զարգացմանը, ներքին և արտաքին առևտրի վերելքին: Առևտրից ստացված եկամուտների հաշվին արագ կերպով սկսեցին վերանորոգվել ավերված նավահանգիստներն ու քաղաքները: Այս ժամանակաշրջանում նույնպես Արևմտյան Եվրոպայի պետությունները հայկական թագավորությունը դիտում էին որպես հենակետ՝ Արևելք-Արևմուտք առևտուրն ընդլայնելու համար: Բացի այդ թե Հռոմի պապը և թե որոշ արևմտյան ավատատերեր հույս ունեին վերասկսելու խաչակրաց արշավանքները, ուստի իրենց ծրագրերի իրագործման հարցում մեծ կարևորություն էին տալիս Կիլիկիայի հայկական թագավորությանը: Այսպես, Հովհան ԻԲ պապը կարգադրեց Կիլիկիային հատկացնել 30 հազար ֆլորին՝ Այասի ամրությունները նորոգելու նպատակով: Սակայն հետագայում՝ տարիներ շարունակ ձգձգեց գումարի վճարումը՝ պատճառաբանելով, որ հայոց եկեղեցին չի կատարում ունիայի վերաբերյալ նախորդ եկեղեցական ժողովների որոշումները և հայոց արքան խոչընդոտում է կաթոլիկության քարոզչությանը:

Մինչև 1329թ. երկրում առևտուրը և ընդհանրապես տնտեսությունը բնականոն էր զարգանում, իսկ արտաքին քաղաքականության մեջ ճգնաժամային երևույթներ չէին նկատվում: Թեև Լևոն արքան լավ էր հասկանում, թե ինչպիսի լուրջ վտանգ էր իրենից ներկայացնում Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունը, բայց, այնուամենայնիվ, ավելի շատ հակված էր Արևմուտքի հետ կապերի սերտացմանը: Դժվար է ակնկալել, որ այս հարցում Լևոն V-ից տարբեր հայացքներ է ունեցել թագավորի անչափահասության շրջանում երկրի փաստական կառավարիչ Օշին Պայլը: Բացար-

[15] Գ. Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի պատմություն, էջ 195:

ձակապես համոզիչ են հնչում Ա. Գալստյանի պնդումները, թե «Թագավորությունը իր ձեռքը վերցրեց Օշին պայլը և սկսեց պայքար ծավալել արքունիքում արևմտաեվրոպական ազդեցության դեմ՝ ձգձգելով բարեկամական հարաբերությունների մեջ մտնել հզորացող Եգիպտոսի հետ: Այդ նպատակով նա 1323թ. հայոց կաթողիկոս Կոստանդին Լամբրոնացում ուղարկեց Եգիպտոս: Կահիրեում 1323թ. կնքվեց հայ-եգիպտական բարեկամության դաշնագիր»: Իրականում Օշին Պայլը, Մ. Օրմանյանի խոսքերով ասած. «Քաղաքական ուղղութեամբ ալ կատարելապես լատինամոլ ընտացքին կը հետեւէր»: Նույնքան անընդունելի է նաև Ա. Գալիստյանի 1323թ. հաշտության պայմանագրին տված գնահատականը[16]:

Հայոց արքան, չափահաս դառնալով, 1329թ. հունվարի 26-ին սպանել տվեց իր կնոջը՝ Ալիս թագուհուն, աներ և խնամակալ Օշին Կոռիկոսցուն, ինչպես նաև նրա եղբայր Կոնստանդին սպարապետին: Նրանց փոխարեն Կիպրոսից Կիլիկիա հրավիրվեցին Լևոն V-ի հորաքրոջ որդիներ Ջիվան և Բոհեմունդ Լուսինյան եղբայրները, որոնց Օշինը դուրս էր քշել Կիլիկիայից: Ջիվանը նշանակվեց պայլ, իսկ Բոհեմունդին տվեց Կոռիկոսի շրջանն ու բերդը: Բարձր պաշտոն ստացան նաև Բալդին ու Բոհեմունդ լատին իշխանները[17]:

Օշին Պայլի գործունեությանը դեմ էին որոշ հայ պարոններ, որոնց հետ սերտ կապեր էր պահպանում Լևոն V թագավորի հորաքույր Զաբելը՝ Կիպրոսի Ամորի թագավորի այրին: Օշին Պայլի և նրա կողմնակիցների սպանության դրդապատճառների մասին, իհարկե, կարելի է տարբեր ենթադրություններ անել: Այնուամենայնիվ դժվար է պատկերացնել, թե, բացի իշխանության համար պայքարից, արքայի և նրա ամենահզոր խնամակալի միջև եղել են տարաձայնություններ արտաքին քաղաքականության, առավել ևս Արևմուտքի, Հռոմի պապի ու կաթոլիկ եկեղեցու հետ հարաբերությունների վերաբերյալ հարցերում: Ս. Բռնազյանի այն տեսակետը, որ Լևոն V-ի նպատակը եղել է իշխանությունից հակալատինական տարրերին հեռացնելը, Ա. Գալստյանի անստույգ կարծիքի արձագանքն է և չի հիմնավորվում սկզբնաղբյուրների վկայություններով: Ս. Բռնազյանը այս կապակցությամբ բերում է հետևյալ փաստարկները. «Մեկ տարի հետո Լևոն V ամուսնանում է Սիցիլիայի թագավոր

[16] Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 158:
[17] Հ. Գ. Ժամկոչյան, Ա. Գ. Աբրահամյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Ս. Պ. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, Երևան 1975, էջ 538:

Ֆիլիպ I-ի դստեր հետ և գլխատվախ իշխանների փոխարեն Ջիվան Լուսինյանին նշանակում է պայլ, իսկ վերջինիս եղբորը՝ Բոհեմունդին, Կոռիկոսի տեր»[18]: Մատնանշված փաստերից առաջինը՝ արևմտյան երկրների հետ խնամակալական կապեր հաստատելը սովորական երևույթ էր Կիլիկյան Հայաստանում խաչակրաց շարժման սկզբից ի վեր, հետևաբար այդ հիման վրա լատինամոլության մասին խոսելը վաղաժամ եզրակացություն անել կնշանակի: Ավելորդ չէ նաև հիշել, որ ժամանակին հենց Օշին Պայլն էլ անմիջականորեն մասնակցել էր Արևմուտքից Օշին արքայի համար հարսնացու բերելուն և ավելին՝ թագաբորի մահից հետո ամուսնացել էր այրի թագուհու հետ: Ինչ վերաբերում է թափուր պաշտոնները Լուսինյան եղբայրներին հանձնելուն, ապա չմոռանանք, որ նրանք Լևոն V-ի հորաքրոջ որդիներն էին և որպես թագավորի ազգականներ են նման բարձր դիրքի արժանացել: Կիլիկյան Հայաստանի պատմության հետագա ընթացքը ցույց տվեց, որ լատինամոլությունը պայմանավորված չէ առանձին անձանց համակրանքով կամ նախասիրություններով և խոր արմատներ էր գցել ավատատիրական վերնախավի շրջաում: Տիրապետող հայացքներից արմատական շրջադարձ կատարող գործիչներ, ինչպես այդ եղավ XII դարում Մլեհի պարագայում, XIII-XIV դարի Կիլիկյան Հայաստան չծնեց:

1329թ. իրադարձությունները ունեին զուտ ներքաղաքական դրդապատճառներ: Պարզ է, որ Լևոնը մեծանալով պետք է ձգտեր ազատվել Օշին Պայլի և նրա ընտանիքի անդամների վերահսկողությունից՝ համարելով, որ Օշին Կոռիկոսցին և յուրայինները ձգտում էին տիրանալ գահին՝ չբացառելով նույնիսկ արքայի սպանությունը:

Աբդուլ Ֆիդայի տեղեկություններից հստակ երևում է, որ Օշին Պայլը Եգիտոսում ամենևին էլ հակալատին ուղղվածություն ունեցող գործիչի համբավ չի ունեցել: Այլապես դժվար է պատկերացնել, թե նրա սպանությունը կարող էր գոհունակությամբ ընդունվել մամլուքյան սուլթանությունում: Մինչդեռ Լևոն V-ը սպանված Օշին Պայլի գլուխը ուղերկել է Եգիպտոս, իսկ «սուլթանը նրան ուղարկեց պատիվներ, զենք, ձիեր՝ թամբ ու սարքով»: Այսպիսով, Կիլիկյան Հայաստանի լատինասեր ուժերի առաջնորդի սպանությունը թշնամական պետությունում ընկալվել է որպես Եգիպտոսի նկատմամբ քաղաքականության մեջ հնարավոր փոփոխությունների ազդա-

[18] Հովհաննիսյան, էջ 159:

նշան: Լևոն V-ն, էլ, իր հերթին, օգտվել է մամլուքյան սուլթանի քաղաքական աջակցությունից երկրի ներսում իր դիրքերը ամրապնդելու համար[19]:

Լևոն V-ը, ազատվելով իր խնամակալներից, սկսեց իր կողմնակիցների հետ ղեկավարել թագավորությունը: Նա կատարեց մի շարք քայլեր, որոնց հետևանքով կրկին բարդացան Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները: Հայոց արքան, անտեսելով եգիպտացիների բազմաթիվ զգուշացումները, կրկին վերսկսեց բանակցությունները Արևմուտքի հետ: Այսպես, 1329-1331թթ. Լևոն V թագավորի համար հարսնացու գտնելու համար Եվրոպա մեկնած պատվիրակությունը, ամենայն հավանականությամբ, ունեցել է նաև քաղաքական խնդիրներ և բանակցություններ է վարել եվրոպականերկրների միապետների հետ:

Արևմտամետ քաղաքականության խորացման պատճառն այն էր, որ հայերը Արևելքում այլևս չունեին մոնղոլներին հավասարազոր դաշնակից: Չպետք է անտեսել այն փաստը, որ հայկական թագավորությունը մեծ չափով շահագրգռված էր երկրին հսկայական եկամուտներ ապահովող առևտրական հարաբերությունների ծավալմամբ: Մինչդեռ առևտրական հարաբերություններ հիմնականում հաստատվել էին Արևմտյան Եվրոպայի երկրների ու քաղաքների, մասնավորաես՝ Վենետիկի, Ջենովայի, Մոնպելեի, Մարսելի և Սիցիլիայի հետ: Բացի այդ, Կիլիկյան Հայաստանում գտնվող խոշոր առևտրականներից շատերը եվրոպացիներ էին, որոնք մեծ շահագրգռվածություն էին հանդես բերում քաղաքական և տնտեսական կապերը Արևմուտքի հետ սերտացնելու հարցում: Պատահական չէ, որ Կիլիկյան Հայաստանը 1333թ. վենետիկցիներին շնորհեց առևտրական արտոնագիր, ազատելով նրանց մի շարք հարկերից:

Հայոց արքայի նմանատիպ քաղաքականությունը չէր կարող վրիպել մամլուքների ուշադրությունից: Այն մեծ դժգոհություն առաջ բերեց Եգիպտոսում: 1335թ. Արևելք հասան խաչակրաց հնարավոր նոր արշավանքի մասին լուրերը: Լևոն V-ի վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը երկրում մեծ զայրույթ առաջացրեցին: Հատկապես սուր բնույթ ձեռք բերեց իշխանամետ գործիչների և նրանց հակառակորդների միջև պայքարը: Դրա հետ մեկտեղ ուժեղացավ նաև Եգիպտոսի սուլթանության թշնամանքը հայոց թագավորության հանդեպ: Մամլուքները հայոց

[19] նշվ. աշխ., էջ 161:

արքայի դիվանագիտական գործունեությունը Արևմտյան Եվրոպայում գնահատեցին որպես 1323թ. կնքված հաշտության պայմանագրի խախտում և որոշեցին պատժել հայկական թագավորությանը:

Այսպիսով, 1324-1335թթ. ընկած ժամանակաշրջանը ցույց տվեց, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը, իր հույսերը կապելով քրիստոնյան Արևմուտքի հետ, նպաստեց մամլուքների արշավանքների կրկնվելուն:

1335թ. Եգիպտոսի սուլթանի հրամանով մամլուքյան բանակը, Հալեպի ամիրա Ալթուն Բուղայի հրամանատարությամբ, ներժուժեղ Կիլիկիայի հայկական թագավորության սահմանները, կողոպտեց Մամեստիան, Ադանան, Տարսոնը: Գրիչ Ներսես Կրակցու վկայությամբ. «անաւրէն ազգն Իսմայէլի յարեան ի վերա երկրին Կիլիկեի. և զամէնն ի սուր մաշեվին սուսերի, և զայլ ի Մսըր վարեցին գերի, և զկէսն՝ ի յերկիրն Խամանի»[20]: Ըստ Սամվել Սնեցու երկը շարունակոցներից մեկի, թշնամին մեկ օրում կարողացավ գրավել Մամեստիան, Ադանան, ապա շարժվեց դեպի Մոլևոն: Հեղինակը նշում է, որ հայոց արքան անպատրաստ գտնվեց դիմակայելու թշնամուն: Թշնամական զորքերը շատ արագ գրավեցին Դաշտային Կիլիկիայի քաղաքները:

Կարևոր է պարզաբանել, թե իրականում երբ է մամլուքյան բանակը ներխուժել Կիլիկիայի հայկական թագավորության սահմանները և գրավել հայոց թագավորության քաղաքները. Արաբ հեղինակ Իբն Իյասը նշում է, որ սուլթան Նասիրը պայմանագրով կաշկանդված լինելով՝ չհարձակվեց, բայց թույլ տվեց այդ անել Հալեպի ամիրա Ալթուն Բուղային: Վերջինս ծովեզրյա դաշտային վայրերի վրա հարձակվեց հալեպյան գնդերով, գրավեց Մամեստիան, Ադանան, հասավ մինչև Տարսոն: Պատմիչը նշում է, որ Ալթուն Բուղայի բանակը շարժվեց Սսի վրա և պաշարեց այն հիջայի 735 թվականի ռամազն ամսի 17-ին՝ 1335թ. մայիսի 12-ին: Այսպիսով, եթե հավատ ընծայենք արաբ հեղինակին, ապա Դաշտային Կիլիկիայի ծովեզրյա քաղաքների գրավումը պետք է մոտավորապես մայիս ամսվա սկզբներով, քանի որ Սիսը բավականին հեռու է Ադանայից, Մամեստիայից և Տարսոնից: Ի տարբերություն Իբն Իյասի՝ հայ հեղինակները այլ հաղորդում են տալիս արշավանքի ճշգրիտ ամսվա և օրվա վերաբերյալ: Այսպես հիշատակարանների հեղինակներից մեկը, որպես ներխուժման օր, մատնացույց է անում 1335թ. մայիսի 26-ը, հինգշաբթին: Հեթում Ախտուց տերը նշում է, որ

[20] նույն տեղում, էջ 163:

թշնամու բանակը գրավել է ծովեզրյա քաղաքները 1335թ. մայիսի 25-ին, հինգշաբթի օրը: Քանի որ հինգշաբթի օրն է հանդիսացել 1335թ. արշավանքը դեպի Կիլիկիայի հայկական թագավորությունը սկսվել է 1335 թ. մայիսի 25-ին: Մամլուքյան զորքերը, դաշնակցած հարևանների հետ, 1335-1336թթ. նոր հարձակումներ գործեցին հայոց թագավորության դեմ: Թշնամու զորքերին հաջողվեց գրավել Նղիր բերդը: Հիշատակարանների հեղինակներից մեկը նշում է, որ «Ի թուականի ՉՁԵ (1336) յայսմ դառն և շատ ժամանակից, զոր անաւրէն ազգն իսմայէկաց, տուսն փարաւոնի, ի մեծ նեղութիւն և ի վտանգի կալան զաշխարհս Կիլիկեցւոց. և արշաւեաց զաւրաւք և էառ զամենազաղ և զաստուածապահ բերդն զնղիրն, նստելով ի վերայ նորա բազում ժամ»[21]: Այսպիսով, հեղինակը Նղիր բերդի գրավումը թվագրում է 1336թ.: Հեթում Ախտուցի ժամանակագրության մեջ Նղո բերդի գրավումը դրված է 1335թ. վերջերին: Առավել հավանական է թվում հենց բերդի տիրոջ՝ Հեթումի տեղեկությունը:

Այսպիսով Կիլիկիայի հայկական թագավորությունը պարտություն կրեց, որովհետև հայկական արքունիքը հույսը դրեց եվրեպական պետությունների օգնության վրամ որը ոչինչ չտվեց հայերին, բացի հարևան իշխանությունների թշնամանքից[22]:

Երկիրը գտնվում էր անելանելի վիճակում, և դրա մեղավորը հայոց արքան էր իր մի խումբ կողմնակիցների հետ: Լևոն V արքան հարկադրված էր պատվիրակություն ուղարկել սուլթանի մոտ՝ հաշտություն կնքելու նպատակով: Սակայն պատվիրակներ Բաղդին (Պաղտին) մարաջախտը և Վասիլը Հալեպում ձերբակալվեցին: Պաղտին մարաջախտը բանտում մահացավ, իսկ Վասիլը մի տարի անց վերադարձավ Կիլիկիա:

Կիլիկյան Հայաստանի դիվանագիտությունը եռանդում քայլեր ձեռնարկեց Եգիպտոսի հետ հաշտություն կնքելու ուղղությամբ: Մասնավորապես, հայ պետական ու հոգևոր գործիչները դիմեցին Բյուզանդիայի օգնությանը, քանի որ կայսրությունը ավանդաբար սերտ հարաբերություններ էր պահպանում մամլուքյան սուլթանության հետ:

1337 թ. մամլուքյան զորքերը կրկին հարձակվեցին Կիլիկիայի վրա և պաշարեցին Այասը: Իբն Իյասը նշում է, որ. «1337 թ. մայիսի 5-ին Այասը 3 օրով պաշարվեցմ բայց բանակը հրաման ստացավ վերադառնալ՝ հայոց թագավորի հետ համաձայնու-

[21] Հովհաննիսյան, էջ 165:
[22] Գ. Հ. Ժամկոչյան, Գ. Ա. Աբրահամյան, Տ. Ս. Մելիք-Բախշյան, Պ. Ս. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 539:

թյուն կնքած լինելու պատճառով»: Հարցն այն է, որ Վասիլի վերադարձից հետո հայոց արքան սուլթանի մոտ ուղարկեց Հեթում Ախտուց տիրոջը. «Թագաւրն Լևոն յղրկեց զիս՝ զՀեթում Ախտուցն տէր ջամբռլայս Հայոց առ Մսրա սուլտանն դեսպան: Գնացի ինչվի յԱվազնիյարիշն, և անտի դարձուց զիս սուլտանն Միլէք Նասրն, որ եկի յերկիրս, կեցայ ի դուրս ամիս»: Ի վերջո, երեք տարի անընդմեջ շարունակվող հարձակումներից հետո միայն Եգիպտոսի սուլթանը համաձայնեց հաշտության պայմանագիր կնքել Կիլիկիայի հայկական թագավորության հետ: Եգիպտոսի սուլթանությանն էր անցնելու Այաս քաղաքը՝ բացի ծովային բերդին, մի շարք այլ տարածքներ՝ բազմաթիվ բերդերով, որոնց մեջ էին Մամեստիան, Հարունիան, Փայասը, Նաջիման, Կովեյրան, Համուդան: Լևոն V -ն երդվեց, որ խզելու է իր բոլոր կապերը Հռոմի պապի և Արևմտյան Եվրոպայի միապետների՝ մասնավորապես Ֆրանսիայի արքա Ֆիլիպ VI-ի հետ, որն այդ տարիներին դեպի Արևելք կազմակերպվող նոր խաչակրաց արշավանքի գաղափարի երկրպագուներից էր: Փոխարենը Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունը պարտավորվեց իր զորքերը հետ քաշել Կիլիկիայի սահմաններից: Կիլիկյան Հայաստանի տարածքային կորուստների մասին շատ արժեքավոր հաղորդում է պարունակում Հեթում Ախտուց տիրոջ ժամանակագրությունը. «Ի թվին ՉՁԶ (1337) երետ թագաւորն ի Հայոց երկրէն ի Մսրա սուլտանն ի Միլէք Նասրն՝ զՋահնայ այն դիհն իր բերդերովն ու երկրովն: Եւ ի նույն տարիս երեւեցաւ երկինս ասթխղն գիսաւոր: Եւ տվին ի խարամանն զԴեղնքարն և այլ բերդեր այլ խլեցին»[23]: Այսպիսով, այս եզակի հաղորդմամբ պարզվում է, որ բացի Եգիպտոսի սուլթանությանը անցած տարածքներից՝ հայկական թագավորությունը կորցրել է նաև այլ տարածքներ: Մասնավորապես, Կարամանյան պետությանն են անցել Դեղնքարը և այլ բերդեր: Այսպիսով, Կարամանյան պտությունը, անընդհատ աջակցություն ցույց տալով մամլուքներին, դրա դիմաց փոխհատուցում է ստացել:

Ի տարբերություն նախորդ տարիներին կնքված հաշտության պյմանագրի՝ այս անգամ թշնամիներին զիջվեցին բազմաթիվ քաղաքներ ու բերդեր, որոնք ունեին թե ռազմավարական և թե տնտեսական նշանակություն: Եգիպտոսին անցավ Դաշտային Կիլիկիայի մի մասը, այդ թվումէ՝ Այաս քաղաքը, որի նավահանգիստը մեծ եկամուտ-

[23] Նույն տեղում:

ներ էր ապահովում երկրին: Իբն ալ-Վարդիի դիտարկմամբ. «Կիլիկիան անհոգի մի դիակ է դառնում՝ կորցնելով այդ երկրները»[24]:

1337թ. հայ-եգիպտական հաշտությունից հետո Կիլիկյայի հայկական թագավորությունը ապրեց իր թուլացման շրջանը: Արքունիքը լատինական տարրերի ազդեցության տակ շարունակեց իր բանակցությունները Հռոմի պապի և եվրոպական պետությունների հետ, բայց մերժում ստացավ: Թագավորն ընդհարվեց Հակոբ կաթողիկոսի հետ, որը դեմ էր նրա վարած քաղաքականությանը, և պաշտոնանակ արեց նրան: Արքունիքի այդ վարքագիծը խորացրեց երկրի ներքին պառակտումը: Ժողովրդի մեծ մասը պահանջում էր պահպանել հայ-եգիպտական հաշտության պայմանները: Սակայն թագավորն ու նորընտիր Մխիթար կաթողիկոսը շարունակեցին նախկին քաղաքականությունը:

Թագավորության համար այդպիսի ծանր կացության ժամանակ, 1342թ. երիտասարդ հասակում հանկարծամահ եղավ Լևոն V-ը, առանց ժառանգ թողնելու: Լևոն V-ի մահից հետո թագավորական գահը Հեթումյան դինաստիայից անցնում է Ֆրանսիական ծագում ունեցող Լուսինյաններին, որոնք մոր կողմից ազգակից էին Հեթումյաններին, իսկ հոր կողմից՝ Կիպրոսի թագավորական տանը: Սկզբում գահը անցավ Լևոն V-ի հորաքրոջ կրտսեր որդուն՝ Ջիվան Լուսինյանին (Կոստանդին II), որը վարում էր պայլի պաշտոնը, բայց մի տարի անց նրան ստիպում են հրաժարվել գահից և այն հանձնում են նրա եղբորը՝ Գվիդոն Լուսինյանին: 1341 թվականին նրան օծում են Կիլիկիայի հայոց թագավոր Կոստանդին III անունով (1343-1344/45): Այդպիսով, Կիլիկիայում հաստատվում է Լուսինյանների դինաստիան[25]:

Մամլուքների հարձակումներն այս շրջանում ավելի հաճախակի էին դառնում, իսկ օգնության համար Ֆրանսիային ու Հռոմի պապին ուղղված դիմումները, որոնց սխալմամբ մեծ նշանակություն էր տրվում, միայն ավելի ծանրացնում էին դրությունը[26]:

---

[24] Հովհաննիսյան, նշվ. աշխ.,էջ 168:
[25] Գ. Հ. Ժամկոչյան, Գ. Ա. Աբրահամյան, Տ. Ս. Մելիք-Բախշյան, Պ. Ս. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 540:
[26] Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի պատմություն, Երևան 1985, էջ 190:

Վերջում հարկ է նշել, որ Եգիպտոսի հետ տեղի ունեցած պատերազմի ժամանակ (1335-1337) Կիլիկիայից արտաքսվել են եգիպտահպատակ արաբ վաճառականները, որոնք բամբակ էին բերում Այաս և ապահիկով վաճառում[27]:

Այսպիսով, արևմտաեվրոպական երկրների հետ հարաբերությունների սերտացման պատճառով Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները ավելի բարդացան: Թագավորության սխալ քաղաքականությունը դժգոհություն առաջացրեց երկրում և կազմալուծվեց նվաճողների դեմ պայքարելու ունակ ուժերի միասնական ճակատը:

[27] Գրիգոր Միքայելյան Կիլիկիայի Հայկական պետության պատմություն, Երևան 2007, էջ 386:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, 14-րդ դարի առաջին քառորդը Կիլիկիայի հայկական թագավորության պատմության ամենակարևոր ժամանակահատվածներից մեկն է: Կիլիկյան թեև դեռ պահպանում էր իր հզորությունը և կարող էր պաշտպանել երկրի սահմանները, սակայն միջազգային ասպարեցում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով հայտնվել էր քաղաքական աննպաստ վիճակում:

Այսպես XIV դարի սկզբներին հայ-եգիպտական, հայ-մոնղոլական և Կիլիկիա-Արևմուտք հարաբերություններում շարունակում էր կարևորվել Կիլիկիայի տնտեսական դերը, ինչպես նաև նրանք ցանկանում էին տիրել առևտրային ճանապարհներին:

XIV դարի սկզբներից, խաչակրաց շարժման վերջնական ձախողումից հետո, միջազգային նոր իրադրության պայմաններում Կիլիկիայի ռազմավարական, տնտեսական ու քաղաքական նշանակությունն ավելի աճեց, և այդ աճին զուգահեռ ավելանում էր Եգիպտոսի սուլթանության թշնամանքը հայերի հանդեպ, որովհետև Կիլիկյան Հայաստանը, վերածվելով Արևելքի և Արևմուտքի միջև առևտրական կամրջի, արձել էր Եգիպտոսի մրցակիցը:

Կեսդարյա պայքարի ընթացքում հայերը տարել են ընդամենը մեկ կարճատև հաղթանակ: Այդ հաղթանակի արդյունքում հայերը փորքեցին վերականգնել իրենց տնտեսությունը, պատերազմի ծանր հետևանքները, սակայն մոտալուտ հարձակումները հնարավորություն չտվեցին վերջնականապես իրականացնել իրենց նպատակները:

Սակայն ինչպես պատմության ցանկացած իրավիճակներում, այս շրջանում ևս էականն հայերի ներքին խռովություններն էին, որոնք էլ իրենց հերթին նպաստեցին հայկական կողմի պարտություն կրելուն, մասնավորապես, կասկածը, որ նրանց փորձում էին կրոնափոխ անել, կամ Լևոն թագավորի խնամակալների խռովությունները:

Այսպիսով ի մի բերելով ուսումնասիրությունները, ևս մեկ անգամ անդրադառնանք հայ-եգիպտական հարաբերությունները «կարգավորող» 15 տարով կնքնված պայմանագրին:

Վերջինս հայերի համար այդքան էլ հարմար պայմանագիր չէր, քանի որ նրանք բացի նրանից, որ պարտավորվում էին վճարել բավականաչափ մեծ հարցեր, նաև

պետք է իրենց կապերը խզեին արևմուտքի հետ: Եգիպտոսը միայն պարտավորվում էին իրենց միջոցներով վերաշինքել ավերված քաղաքները, ինչպես վերը նշեցի, բացառությամբ Այաս ծովային բերդի ամրությունների:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առաքելյան Ծ. Պ., Գալոյան Գ. Ա., Երեմյան Ս. Տ., Խաչիկյան Լ. Ս., Հակոբյան Ա. Մ., Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., հ. 3, Երևան 1976, 1023 էջ:
2. Աղայան Ծ.Պ., Առաքելյան Բ.Ն., Գալոյան Գ.Ա., Երեմյան Ս.Տ., Խաչիկյան Լ.Ի., Հակոբյան Ա.Մ., Ներսիսյան Մ. Գ, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, ԳԱ հրատ., 1971, 944 էջ:
3. Գալստյան Ա., Կիլիկյան հայոց թագավորության կործանման հարցի շուրջը, «Լրաբեր», 1971, N 9, էջ 50-63:
4. Գրիգոր Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2007, էջ 552:
5. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1985, 266 էջ:
6. Հ. Գ. Ժամկոչյան, Ա. Գ. Աբրահամյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Ս. Պ. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1975, 780 էջ:
7. Հովհաննիսյան Ա.Է., Կիլիկիայի Հայկական թագավորության և եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375թթ, Երևան, Աճեմյան մատենաշար, 2008, 236 էջ: